Նորին Վեհ Օծութիւնն, Երդ մեծապատիւ եղբայրութիւնն, ազգասէրք և պաշտպանք եկեղեցւոյ սաստիկս ցաւին և խոր ի սիրտ խոցին, զողբալի վիճակ կորստեան Ազգին կարդալով յայն կեղծուպատիր յօդուած անդգուշ Մշ-ին, ո՛չ սակաւ և մեք ընդ աստի ազգայնոց ցաւիմք ընդ այն յիմարութիւն, որոյ գրիչն աստ ի Դաւրէժ խոստովան լինի, թէ չէ այն իմ յօդուած, ... որուն սատար է լուտերամիտ ոմն Ս...զամասցի անմիտ թշնամի Հոգևորականութեան Ազգիս Հայոց, Այս անմիտ ի Տփխիսայ գրեաց քանի ամսով առաջ զնամակ ինչ առ Գեր. Առաջնորդ տեղւոյս միջնորդ լինել բարձրագոյն Դրան Պարսից՝ ծախիւք Պետութեանն առաքել զերկոսին եղբարս իւր ի Գիմնազիայն Ցըփխեաց, զոր ղժուարին և անսովոր նոր ինչ համարեալ սորա, զանց զնուքաւ արար, յոյր սակս կիրք նախանձու վառեալ ի հնոց որսի նորա, աբատաւորել զԱռաջնորդն խորհեցաւ, անմտաբար գատելով, թէ այս արատ՝ Առաջնորդին միայն վերաբերի և ոչ լրութեան ազգիս։

Իսկ ի Մարաղայ յիրաւի որջանալ կամեցան քանի ինչ զայլք մարգակերպ և սկսան խախտել զմանս ի մտաց՝ յինքեանս զնոսա ձգելով, ձրիաբար ուսուցանելով, և զդրամս բաշխելով, զորմէ շուտափոյթ տեղեկացեալ մեր՝ . . . հոգացաք զարժանն, և արդէն փախստեայ գնացեալ չորից անձանց խախտելոց ի մտաց՝ անկան յորջս իւրեանց՝ Յորմի առ Ամերիկացի քարոզիչս, որք ի բազում ամաց հետէ որսացեալ զբազմութիւնս անտէրունջ Ասորիս՝ բունեն անդանօր. այլ որպէս լսեմք՝ հնարիւք ինչ և գաղտնի միջամտութեամբ պաշտպանացն իւրեանց ունին վերադառնալ. յոր եթէ յաջողեսցին՝ անշուշտ և ես գնացից անձամբ խօսել ընդ ժողովրդեանն և զարժան տնօրինել՝ . . . .

Ապաքէն վախճան տալով պատասխանեոյ առաջին երեսի Նամակիդ՝ յերկրորդ փութալ հարկադրիմ։

Որպէս նկատեմ, ո՛ պատուական Եղբայր իմ, ի ցուցակէ գեղջ Ղարադաղու, ոչ գիւղօրայք 38, այլ 27 գտանեմ, յորոց չորք միայն համեմատաբար են մեծ, յորոց առաջինն բաղկանայ ի 70 տանց, երկրորդն՝ երրորդն՝ իւրաքանչիւրն 35 տանց, և չորրորդն 30 տանց, իսկ բազումք ի մեացորդացն իւրաքանչիւրն 9 տանց, և այլքն ի 10—11, 13, 14, և 15 տանց, և մին միայն ի գեղջն բաղկանայ ի 24 տանց։ Որք ըստ մեծի մասին, անաչառութեամբ ասեմ, և ոչ ստիմ, են աղքատ երկրագործք, որք ի բանիկ գարնան երանեն ի գործս մշակութեան և երկրագործութեան իւրեանց, մինչ գրէթէ ի ձմեռնամուտն, յորում մանկունք նոցին ժողովեալք՝ ուսանին առ ոտս քահանայից իւրեանց. իսկ առաջին երկոքին մեծ գիւղքն ունին զմանկավարժ, իսկ զայլոց ևս հետզհետէ հոգասցուք բերելով զմանկունս նոցա յուսումն յազգային վարժարանին Դաւրիժոյ։

Աւելորդ համարիմ՝ մանրամասնաբար քննագատել զըպարտութիւնս կեղծուպատիր յօդուածոյն, քանզի ինքնին բացայայտ ծաղր և նուշաւակ լինի ժողովրդոցս։ . . . .

Ց2 Սեպտ. 1872 —ի

է Դ—ր։

ԵՐԿՐԱՀԱՐԹ Ի ԳԱՆՁԱԿ

Մեր Արժանապատիւ Թղթակից կհաղորդէ ի Գանձակէ, որ ամսոյս 2ին անդ երկրաշարժ պատահել է, այնպէս որ ժողովուրդն դուրս է փախած տեղւոյն Ս. Յովհաննէս եկեղեցիէն։

Գոհութիւն Աստուծոյ՝ ոչինչ վնաս չէ պատահած։

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ ԵՒ ՊԵՍՍԱՐԱԳԻՈՑ ՔԱՆԻ ՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԵԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՆԵՐԿԱՑ ԴՐՈՒԹԵԱՆՆ։

(Շարունակութիւն)։

Բ. դպրոց Թէոդոսիոյ

Թէոդոսիոյ ժողովրդական դպրոցը քանի մի տարի է միայն որ սկսած է բարեկարգութեան տակ իյնալ շնորհիւ ուսումնասիրութեան Ալ-

թունճեան եղբարց, և գլխաւորապէս այն աղդատոհմին մէկ անձին, այն է բարեպաշտ Յովսէփ աղայի Ալթունճեանց անձնանուէր հոգատարութեամբը, Տեղւոյն Ս. Սարգիս կիսակործան եկեղեցւոյ շրջապատը կանգնած են նոյն աղաները արականաց և իգականաց դպրոցին երկայնանիստ շինութիւնը, որոց մէկ մասին մէջ միայն կգտնուին երկսեռ դպրոցները. իսկ միւս մասը ցորեանի շտեմարաններ լինելով՝ տրուած են վարձու և դպրոցաց ուսումնական ու տնտեսական կառավարութեան արդեանց մէկ մասը կձեւացնեն։ Յիշեալ եկեղեցւոյ պատկանեալ կրպակներն և արդիւնքն ալ, որ է 700 ռուբլի ի տարին յատկացուցած է դպրոցին. բայց ափսոս որ դպրոցը այդ դրամին փոխարէն օգնութիւն մի չըներ տեղւոյն Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ պայծառութեանը. վասն զի տեղւոյն քահանայն շատ անդամ տիրացու ու երգիչ չեղածին պատճառաւը՝ կստիպուի առանց ժամասացութիւն ընելու ելնել եկեղեցիէն, որ շատ ցաւալի բան է և միանգամայն ընդդէմ խղճի և արդարութեան անխոհեմ գործողութիւն։ Իմ վրայ զարմանալի ազդեցութիւն ըրաւ Թէոդոսիոյ եկեղեցւոյն մէջ հետևեալ գայթակղեցուցիչ տեսարանը։

Կիրակէ օր մի բաւական ժողովուրդ ներկայ էր Ս. Պատարագին։ Նոյն օրը չգիտեմ թէ ինչպէս պատահեցաւ որ ուրբաթիր դպիր մը երևցաւ եկեղեցւոյ մէջ։ Սա դպրութիւնն ու սպասաւորութիւնը միանգամայն կընէր զանազան խառնիխուռն ելևէջներ ընելով բաղաձայն ներդաշնակութեամբ, երկու կողմն ալ երկու մանկահասակ երգիչներ կանգնած էին անշարժ ու ակնկառոյց, և բերանաբաց կնայէին տիրացուին զարմանալի աշխուժութեանը վերայ, որ կտքնէր երկու պաշտօն ի միասին վարել քաջութեամբ։ Նա իւր քաջութեանը վերայ վստահ կերևնար և յաջողութեանը բոլորովին ապահով, վասն զի մերթ ընդ մերթ գոհ դէմքով կդառնար ժողովրդեան կնայէր, և կարծես թէ ըրած հիանալի ներգործութեանը վերայ կսքանչանայր . . . . Այս տեսարանը միտքս ձգեց Թէոդոսիոյ եկեղեցւոյն քանի մի տարի առաջ ունեցած պայծառութիւնը, բարեզարդութիւնն ու հանդիսաւոր Ս. Պատարագը, և անակնկալ արտասուք աչքերս ցողեցին։

Յետոյ իմացայ որ այդ տիրացուն Թէոդոսիոյ դպրոցին մէջ վերակացու է աշակերտաց և միանգամայն երգեցողութեան վարժապետ։ Իսկ եկեղեցի միշտ չգալուն պատճառը այն է՝ որ եկեղեցիէն հաստատուն ռոճիկ չունի. բայց մեռելին, հարսանեաց ուրախութեան, Զատկին, Ծննդեան տնօրհնէքի, մկրտութեան՝ անհրաժեշտ պարտք կհամարի իրեն քահանային հետ անպատճառ երթալ առանց առիթ մը կորսնցնելու։ Այն բաւական չէ, հաւաստի իմացայ որ քահանայութեան կպատրաստուի։ Աստուած բարի յաջողութիւն տայ, եթէ ասկէց վերջը այնպիսի արդիւնաւոր երգեցողութեան վարժապետները ձեռնադրեն, վասն զի Վ.Հ. Կաթողիկոսին վերոյիշեալ պատկառելի Կոնդակին զօրութեամբը բաւական գժուարին կերևի քահանայութեան հանիլը այդպիսի ուրբակիրներուն։

Թէոդոսիոյ դպրոցն ալ երկու վարժապետ ունի, մէկը Հայկաբանութեան երկսեռ դպրոցաց մէջ, իսկ միւսը Ռուսաց լեզուի։ Հայկաբանութեան վարժապետը մեր Հայ—հռոմէական եղբայրներէն է և Վենետիկի վանքին մէջ աւարտած լինելով իւր ուսման ընթացքը՝ Թէոդոսիոյ դպրոցին համար կարող էր կատարեալ գիւտ մի համարուիլ ու պակ պարծանաց, եթէ դասատուութիւնն ալ գիտութեանը կէսին չափ, քաւորդին չափ լինէր։ Հայոց լեզուի դասատուն միայն Հայերէն գիտցածին համար դժբաղդաբար կամ թէ նոր դասատուութեան եղանակաց ամենևին տեղեկութիւն չունեցածին համար, ընթերցանութենէ անդին չքալեր աշակերտաց դասատուութիւն ընելու ժամանակ. առարկաները բոլորովին աւելորդ կհամարի չգիտեմ թէ ինչ բանի վերայ հիմնելով, զուցէ ռոճիկի սակաւութեան, թէ և շատ բաւական է նորա ռոճիկը՝ որ է 400 ռուբլի ի տարին. իսկ ցուցած արդիւնքը կէսէն պակաս։ Իսկ Ռուսաց լեզուի ուսուցիչը, որ Խալիպեան ուսումնարանի մէջ աւարտած է իւր ուսման ընթացքը՝ 300 ռուբլիով ի տարին, իւր դասատուութեան եղանակը բոլորովին յարմարցուցած է աշակերտաց հասակին ու հասկացողութեանը, և յոյս կայ

որ տարւոյն վերջը, եթէ քննութիւնը լինի անկողմնակալ ոգւով՝ այս ուսուցչաց ծառայութիւնը ըստ արժանւոյն գնահատուի։ Թէոդոսիոյ դպրոցին ամենէն աւելի աչքի զարնող պակասութիւնը ուսանելի առարկայից ցուցակին չեղածն է. նա մանաւանդ յայտնի չէ թէ աշակերտը մինչև իւրեանց ուսումը աւարտելը, ինչ պիտի սովորին. կուզեմ ասել թէ դպրոցը Փրոկրամմա (ցուցակ) չունի. և ի հարկէ այս բանը Հայերէն դասատուի պարտքն էր կազմել, վասն զի միանգամայն դպրոցին Տեսուչը կհամարուի։ Առանց ցուցակի դպրոց մի երբէք կարող չէ որ և իցէ նպատակ ունենալ, և ունեցած նպատակն ալ անհաստատ է և թիւր։

Դպրոցը ունի նաև գեղագրութեան վարժապետ որ ամիսը 10 մանէթ կընդունի. երգեցողութեան վարժապետը 150 մանէթ տարին կընդունի և է վերոյիշեալ տիրացուն։ Ըստ իմ կարծեաց աւելի լաւ կլինէր եթէ Թէոդոսիոյ դպրոցի գլխաւոր հոգաբարձուն ազգասէր Ցովսէփի աղայն Ալթընճեանց այս երկու ռոճիկները միացնելով՝ առարկաներ սովրեցնող ուսուցիչ մի վարձէր. վասն զի երթևեկ աշակերտաց համար վերակացու աւելորդ է, իսկ գեղագրութիւնը Հայերէն լեզուի դասատուն կարող է սովրեցնել, նա մանաւանդ որ բաց յընթերցանութենէ ուրիշ բան չաւանդեր աշակերտաց այժմեան ուսուցիչը։

Օրիորդաց դպրոցը ունի նաև վարժուհի, որոյ ռոճիկն է 10 ռուբլի յամսեան։ Ես բաղդաւորութիւն չունեցայ այն անձին գիտութեան չափը իմանալու, միայն այսքանս հարկաւոր կհամարիմ ասել, որ եթէ յիրաւի այն անձը բաւական ուսումնական է և աշխատասէր, այդ վարձը խիստ քիչ է. իսկ եթէ սովորական ձ—ր—ծի համար նշանակուած է, այդ փողն ալ տալը բոլորովին աւելորդ է։

Որպէս և իցէ, որովհետև Թէոդոսիոյ դպրոցին բարեկարգութիւնը նոր սկսուած է՝ տեսնուած քանի մի յիշատակեալ թերութիւնները ներելի, և ողջութիւնը ժամանակի կարօտ համարելով՝ պատուարժան Ալթունճեան եղբարքը և մահտեսի Վարդերես աղայն Չէմպէրճեանց, որ ձեռնտու եղած են նիւթականապէս դպրոցաց գեղեցկայարմար շինութեանը, արժանի են համազգեաց լիաբերան շնորհակալութեանը իրենց առատաձեռնութեանը համար, բայց մի և նոյն ժամանակ ազգը կարող է խնդրել նոցանէ, որ ի փոխարինէ 700 րուբլեաց արծ. զոր նոքա կընդունին Ս. Սարգիս եկեղեցւոյ կրպակաց արդիւնքէն, անհոգ չլինին աշխատասէր վարժապետ մի վարձել երաժշտութեան 300 կամ 400 րուբլիով ի տարին, որպէս զի դպրոցին հոգևոր նշանակութիւնը չկորսուի, և եկեղեցին ալ քաղցիկ օգուտը վայելէ դպրոցէն, այս ինքն եկեղեցին ու լեզուն զուգընթաց յառաջադիմութեամբ բարգաւաճին, մէկը միւսին օգնելով։

Դ. Դպրոց Հնոյն — Խրիմու.

Թէոդոսիայէն 25 վերստ հեռաւորութեամբ է Հին Խրիմ ասուած քաղաքը, որոյ Հայազգի բնակիչները ունին կայսերաշնորհ իրաւունքներ ու արտօնութիւններ և քաղաքական դատարան (магистратъ)։ Վերջին տարիներու մէջ ևս ծագած է ուսումնասիրութեան գեղեցիկ եռանդ, որոյ ապացոյց իրենց դպրոցներու մէջ տեսնուած ըստ բաւականին յառաջադիմութիւնը, թէև այստեղ ալ ինչպէս ուրիշ տեղեր աչքի կզարնէ հոգաբարձուաց հասարակութենէ անկախ լինելու ջանք իրենց դպրոցական հաշուետեսութեանը մէջ։ Դպրոցը արականաց համար է միայն. իսկ մասնաւոր կերպով օրիորդ.ք դաս կառնեն այստեղ նոյն քաղաքի վարժապետին տունը, և ժամանակաւ զուցէ Հին Խրիմեցիք այս բանի համար ալ պէտք եղած խնամքը ընեն միաբան սիրով ու հաւանութեամբ։

Այս քաղաքէն 3 վերսթ հեռաւորութեամբ անտառի մը մէջ բարձրակամար վանք մի կայ, որոյ նորոգութեանը վրայ բաւական փող դրած է բարեշնորհ Սարգիս Վարդապետ Տ. Գասպարեան, որ այս վանքին մէջ հինգ տարի Վանահայրութեան պաշտօն վարելով՝ իւր լուսաւոր գաղափարներովը կարողացած է ոչ միայն վանական տնտեսական կառավարութիւն բարւոքել, հապա նաև ժողովրդեան ուսումնասիրութիւնը արծարծել, որոյ պտուղ պէտք է անշուշտ համա-

րել Հին Խրիմու դպրոցին պժժման բաւական մխիթարական վիճակը։

Ցիշեալ վանքը ըստ իմ կարծեաց շատ յարմարութիւններ ունի Վ. Ն. Հ. Կաթողիկոսին ազգախնամ դիտաւորութեանցը համաձայն՝ Վանական դպրոց ունենալու գիշերօթիկ աշակերտներով յեկեղեցականութիւն պատրաստելու համար զանոնք։ Օդն ու ջուրը շատ առողջարար է. վանքին արդիւնքն ալ բաւական է 30, 40 աշակերտէն աւելի պահելու և ուսումնական վարժապետներ ունենալու։ Այս վանքին վերայ ժամանակաւ Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանեցին, որոյ մէկ գրուածքը կարդացինք «Արարատայ» թերթերուն մէջ, բաւական աշխատանք ունեցած է յԱռաջնորդութեան երջանկայիշատակ Ներսէս Ե. Ս. Կաթողիկոսին։

(Մնացորդն է յաջորդ համարում)։

ԲԱՐԵՊ. ՄԱՑԱ ԽԱՆՈՒՄ.

Վրաց վերջին Հերակլ արքայի ամուսին բարեպաշտուհի և Ազն. Հայկազն Մայա (Մարիամ) Խանում երբեմն թագուհին ի 26 ամսոյս եկաւ յուխտ և յերկրպագութիւն Մայր Աթոռոյս և սրբոց Մասանց. և Վ. Ն. Հ. Հայրապետին 'ւս ներկայանալով՝ ընկալաւ նորին Սրբութեան օրհնութիւնը, և ընդ երեկս վերադարձաւ յԵրեւան, յորմէ ունի ուղեւորել ի Տփխիս։

Նորա հետ եկած էին՝ իւր հարսը՝ այս ինքն՝ իւր որդւոյն Հերակլ Իշխանի Ազն. ամուսին Թամար Տիկին, և հարազատ եղբայրն (Թագուհւոյն) Վսեմ. Պ. Բահրաման Աղամալեանց և այլ պատուաւոր անձինք։

ԳԵՐ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԱՐԺ. ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ.

Աղէքսանդրապօլոյ Վիճակին Առաջնորդական Փոխանորդ Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղաւիրեանց՝ ի վաղուց ունեցած անձնական տկարութիւնը չկարողանալով համաձայնեցնել տեղւոյն օդոյն հետ, թախանձագին խնդրանօք հրաժարական մատոյց նորին Վեհափառութեան թողուլ Փոխանորդութեան պաշտօնը. և մինչև ի կազդուրումն տկարութեան՝ Նոր—Նախիջևանայ Ս. Խաչ Վանուց մէջ իբրև միաբան մնալ. ուստի ի տեղի հրաժարելոյն կարգեցաւ Ախալցխայ Առաջնորդ.—Փոխանորդ Արժ. Սուքիաս Վարդապետն Պարզեանց։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՔ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳ.—ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻՆ.

Տփխիսայ Ս. Ներսիսեան Ազգ.—Հոգևոր դպրոցի Հոգաբարձուաց երեքամեայ պաշտօնավարութեան շրջանը լրացած լինելով, ամսոյս 12ին քուէից առաւելութեամբք ընտրուեցան երկոտասան նոր Հոգաբարձուներ և չորս կանդիտատներ, զորս ըստ առաջարկութեան Վրաստանի և Իմէրէթի Թեմակալ Առաջնորդ Գեր. Մակար Ս. Արքեպիսկոպոսի՝ Վ. Ն. Հ. Հայրապետ յատուկ Օրհնութեան Կոնդակաւ հաստատեց ի պաշտօն Հոգաբարձութեան, որոց անուանքն են։

Բարեկրօն Դևոնդ քահանայ Խարազեանց,
,, Մուշեղ ,, Տէր Դևոնդեանց,
Մեծապատիւ Պ. Անտօն Դօրղանեանց,
,, ,, Գաբրիէլ Սնտուկեանց,
,, ,, Գէորգ Ակիմեանց,
,, ,, Գրիգոր Արծրունի,
,, ,, ,, Իզմիրեանց,
,, ,, ,, Քուչարեանց,
,, ,, Իսահակ Պապով,
,, ,, Յովհաննէս Ամիրաղեանց,
,, ,, ,, Խատիսեանց,
,, ,, ,, Չիթախեանց.

Իսկ Կանդիտատներն են հետևեալք.

Մեծապատիւ Պ. Գուստաւ Քալանթարեանց,
,, ,, Մարկիանոս Ռոտինեան,
,, ,, Պետրոս Խանտամեան,
,, ,, Ռուբէն Ջալալեան։

Մեծայոյս եմք, զի Նորընտիր Հոգաբարձուք կըփութան Դպրոցի ուսումնական մասին խորին